

**ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2020 Թ. ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԱԿԻՐՃՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ 2021

ՀԱԱՀ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Չնայած 2020-ը հիմնականում անցավ արտակարգ իրավիճակի պայմաններում, Ագրարային համալսարանում հնարավոր եղավ պահպանել ուսումնաօժանդակ ենթակառույցների ստեղծման ու վերակառուցման տեմպը:

1. 2-րդ մասնաշենքում վերանորոգվել է «Ջրային ռեսուրսների կառավարման» ամբիոնի մեկ դասասենյակ և կիցլաբորատորիան, որոնք կահավորվել են ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ ու հագեցվել են ժամանակակից սարքավորումներով, որոնք նվիրաբերվել են ՔԱՐԴ հիմնադրամի կողմից:

2. 5-րդ մասնաշենքի 2-րդ հարկում վերանորոգվել ու անբարենպաստ աշխատանքային պայմաններ ունեցող «Մորֆոլոգիայի, ֆիզիոլոգիայի և ախտաբանական անատոմիայի» ամբիոնին է տրամադրվել նոր հարմարավետ տարածք՝ աշխատասենյակներ ու լսարաններ՝ հարակից միջանցքով:

3. 5-րդ մասնաշենքում վերանորոգվել են վարժարանի ուսուցչական և լաբորատոր տարածքները: ԿԳՄՍ նախարարության Կրթական ծրագրերի կենտրոնի «Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը» բաղադրիչի շրջանակում ՀԱԱՀ վարժարանում հիմնվելու են բնագիտական առարկաների՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության՝ ժամանակակից ռեսուրսներով կահավորված լաբորատորիաներ, որոնց համար անհրաժեշտ գույքը և սարքավորումները արդեն գնվել են:

4. 1-ին և 2-րդ մասնաշենքերում վերանորոգվել և սենսորային ծորակներով ու այլ հարմարանքներով է կահավորվել 9 սանհանգույց, որից 2-ը հարմարեցված ֆիզիկական սահմանափակ կարողությամբ անձանց պահանջներին:

5. 6-րդ մասնաշենքում վերանորոգվել են անասնաբուժական վիրահատարանը, լսարան և լաբորատորիաներ, որոնք հագեցվելու են Համաշխարհային բանկի ֆինանսական օժանդակությամբ ձեռք բերված արդիական սարքերով, մուլյաժներով և կահույքով: Բացի դրանից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող Ուսումնական կառույցների կառավարման և մրցունակության ընդլայնման ծրագրի «Պետական կառույցների կարողությունների հզորացում» բաղադրիչի շրջանակում ձեռք են բերվել անասնաբուժական և արհեստական սերմնավորման գործիքներ և ուսումնական սարքավորումներ:

6. Կոտայքի մարզի Ակունք համայնքի «Օրգանական գյուղատնտեսության փորձացուցադրական ուսումնական կենտրոնում»-ն Արմավիրի մարզի Ոսկեհատի ՈւՓՏ-ում կառուցվել են ջրավազաններ, որոնց շնորհիվ ռոռզման գործընթացը նշված տնտեսություններում էապես բարելավվել է:

7. 1-ին մասնաշենքի 4-րդ հարկում վերանորոգվել է ճեմասրահը և մեկլաբորատորիա, իսկ 3-րդ հարկում՝ «Կենսաբանության և կենսատեխնոլոգիաների» ամբիոնի բոլոր աշխատասենյակներն ու լսարանները՝ իրենց հարակից միջանցքով և լաբորատորիաները, ՄՌԿ բաժնի նոր ընդարձակ աշխատասենյակը:

8. Անվտանգության նկատառումներով ՀԱԱՀ քոլեջում ներդրվել է հրդեհաշիջման և ջրամատակարարման համակարգ, կատարվել է ավտոտնակների տանիքների փոխարինում և ծխարանաձածկի կառուցում:

9. 6-րդ մասնաշենքի կոյուղաջրերի «չհեռացման» բազմամյա խնդիրը լուծվել է կոյուղու համակարգ նախագծելու և կառուցելու շնորհիվ:

10. Մեք Մելքոնյանի անվան լսարանը հիմնանորոգվել և կահավորվել է իր զավակների կողմից:

11. Բարերարների նվիրատվություններով և միջազգային ծրագրերի միջոցներով վերանորոգվել և այժմ կահավորման ընթացքի մեջ է «բաց տարածք» ոճով նախկին մամուլի սենյակը, որը կծառայի համալսարանի ուսանողությանը և դասախոսական կազմին՝ բազմապիսի քննարկումներ, շնորհանդեսներ, սեմինարներ և այլ միջոցառումների րականցնելու համար: Նմանատիպ մեկ այլ սենյակի վերանորոգման և կահույքի ձեռքբերման գործում զգալի աջակցություն է ցուցաբերել Արդշինբանկ ՓԲԸ-ն, որի հետ համատեղ ջանքերով համալսարանը կունենա ևս մեկ կահավորված ընթերցասրահ, որը կծառայի կրթության որակի բարձրացմանը և գիտելիքահեն միջավայրի բարելավմանը:

12. Շինվերանորոգման աշխատանքների ընդհանուր մակերեսը կազմել է շուրջ 2236 քառ.մ:

13. Կառուցված լաբորատորիաներին ավելացան Abionet նախագծի շրջանակում ստեղծված սննդի անվտանգության և օրգանական գյուղատնտեսության լաբորատորիաները: Լաբորատորիաների կահավորման և զինման համար Վիեննայի BOKU համալսարանի հետ համատեղ իրականացվող Օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագրի և Էրազմուս+ ծրագրի աջակցությամբ ձեռք բերվեցին սարքավորումներ:

14. ՀԱԱՀ տարածքում շահագործման հանձնվեց ֆարմբոտ ռոբոտային համակարգով օժտված նորարարական ուսումնասարտադրական նոր ջերմատունը: Ջերմատանն օգտագործվելու է «խելացի» կառավարման համակարգ. այն կլինի ՀԱԱՀ ուսանողների արդյունավետ փորձուսուցում անցկացնելու հիանալի վայր:

15. Ամբողջությամբ վերակառուցվել և սարքավորումներով հագեցվել է Ագրոթեք ինկուբատորի աշխատանքային տարածքը, և այն արդեն իր դռներն է բացել ագրոտեխնոլոգիական մարտահրավերներին դիմակայելու պատրաստ թիմերի առջև:

16. 2020 թվականին շալցվեցին և շուկա հանվեցին Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնի կողմից 2018 թվականին արտադրված «ՄԵՐՈՒՆԴ» կարմիր անապակ և «ՄԵՐՈՒՆԴ» հնացված կարմիր անապակ գինիները: Հարկ է նշել, որ վերջիններս իրենց տեսակի մեջ միակն են շուկայում որպես ուսանողական գինիներ, և դրանց բարձր որակը հաստատվել է մի շարք մասնագիտական կույր համոտեսների ժամանակ:

ԱԿՏԻՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈԻԼՈՒՄ ԵՆ՝

1. Աղավնաձորի Ջարթոնք հանգստյան տան վերանորոգման և դրա բազայի հիման վրա ՀԱԱՀ-ի երիտասարդական ագրոճամբարային կենտրոնի՝ AGRI CAMP-ի ստեղծման աշխատանքները ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ և ԱՀԿՄԿ հիմնադրամի կառավարմամբ:

2. Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող ՀԱԱՀ-ի համար ինտենսիվ պտղատու այգի հիմնելու, ինչպես նաև

պտղաբուծության առարկայի դասավանդող անձնակազմի վերապատրաստման ՖՐՈՒՏԵՆԻԱ ծրագիրը:

3. Համաշխարհային բանկի ֆինանսական օժանդակությամբ գործող «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի» ֆինանսավորած ՀԱԱՀ «Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոնի» ստեղծման ծրագիրը:

4. ՀԱԱՀ և Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ/WFP) համագործակցություն նախագծի աշխատանքները. ՊՀԾ-ի և ՀԱԱՀ-ի գործակցության շրջանակում իրականացվել է 3 համալիր հետազոտություն, ևս 2-ը մեր հետազոտողները կիրականացնեն առաջիկայում՝ զուգահեռաբար կազմելով բիզնես զարգացման հայեցակարգեր: Բացի այդ՝ ծրագրում ընդգրկված դպրոցներին, գյուղատնտեսական կոոպերատիվներին և ֆերմերային այլ թիրախային խմբերին համալսարանն աջակցելու է տարբեր թեմաներով ագրոխորհրդատվությամբ՝ մշակաբույսերի մշակումից մինչև հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարն ու հետբերքահավաքային տեխնոլոգիաների կիրառումը: Ծրագիրը կավարտվի 2021թ. 2-րդ եռամսյակում:

5. ՀԱԱՀ-ի և FAST հիմնադրամի համատեղ գործունեության միջոցով համալսարանում կյանքի կկոչվի ևս մեկ նորարարություն. նախատեսվում է ուսուցանել «Գիտության հետազոտման մեթոդաբանություն և գիտության առևտրայնացում» մոդուլը: Վեց ամիս տևողությամբ ծրագրի ընթացքում «Սննդամթերքի անվտանգություն» և «Ագրոբիզնես և ֆինանսներ» կրթական ծրագրերի մագիստրանտները կձևավորեն հետազոտություն կատարելու մեթոդաբանությանը, գրականության մշակման առանձնահատկություններին, հետազոտության արդյունքների ներկայացման եղանակներին և ձևերին: Դասընթացը մշակվում է և անցկացվելու է Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների (FAST) հիմնադրամի կողմից՝ Բրիտանական խորհրդից ֆինանսավորվող Creative Spark ծրագրի շրջանակում: Ծրագրի գործընկերը Միացյալ Թագավորության Ասթոնի համալսարանն է:

6. Մեկնարկել է «Անտառային լանդշաֆտների վերականգնման հնարավորությունները Հայաստանում» ծրագիրը, որի շրջանակում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից կատարվելու է 2 հետազոտություն՝ «(Ագրո)կենսաբազմազանության ուսումնասիրություն անտառային լանդշաֆտների վերականգնման համար» և «Մասնավոր սեկտորի ներգրավվածության հնարավորությունների ուսումնասիրություն»:

Գործընթացն իրականացվում է Համաշխարհային բանկի հետ գործընկերության պայմանագրի շրջանակում, մեկնարկել է 2020 թվականի սեպտեմբերին և ավարտվում է 2021 թվականի հունիսին:

ՆՈՐ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐ ԿՅԱՆՔԻ ԿԿՈՉՎԵՆ ՏԵՍԱՆԵԼԻ ԱՊԱԳԱՅՈՒՄ

1. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակի միջև կնքվել է պայմանագիր, համաձայն որի՝ համալսարանի

մասնագետների աջակցությամբ մշակվում է գինու ոլորտում դուալ մասնագիտական կրթական ուսուցման ծրագիր: Նախագիծն իրականացվելու է մինչև 2021թ. հուլիսի վերջ,

2. Գերմանական «Ֆոլկսվագեն» հիմնադրամի ֆինանսավորմամբ Համալսարանում կիրագործվի «Մեթանի ձևավորումը սուլֆիդ և նիտրատ պարունակող մնացորդային միջավայրերում» (AZ93573) դրամաշնորհային ծրագիրը 2021-2023 թթ. ընթացքում: Ծրագրի շրջանակում համալսարանում կստեղծվի Բնապահպանական կենսաքիմիայի լաբորատորիա,

3. Ակունք համայնքի«Օրգանական գյուղատնտեսության փորձացուցադրական ուսումնական կենտրոնը»մոտ ապագայում օրգանական գյուղատնտեսության դեմո կենտրոնի վերածելու համար կենտրոնում կներդրվի կաթիլային ոռոգման համակարգ, այգին կպաշտպանվի հակակարկտային ցանցերով և կկառուցվի 200 քառ.մ մակերեսով ջերմոց:

4. Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության աջակցությամբ գործող «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության և ՀԱԱՀ համագործակցությամբ նախատեսվում է Բալախովիտ ՈւՓՏ-ում ստեղծել Կաթնամթերքի վարպետաց դպրոց :

5. «Մարդը Կարիքի Մեջ (People in Need)» ԲՀԿ հայաստանյան ներկայացուցչության, «Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ-ի և ՀԱԱՀ Շիրակի ակադեմիկոս Մ.Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի ստորագրած հուշագրի շրջանակում նախատեսվում է քոլեջ-մասնաճյուղում ստեղծել կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիայի ուսումնափորձարարական լաբորատորիա, որի նպատակն է արտադրական պրակտիկաների առավել արդյունավետ կազմակերպումը և կաթի վերամշակման ոլորտներում մասնագիտական կրթության զարգացումը:

6. ՀԱԱՀ-ի և ԵՄ կողմից ֆինանսավորվող և Ավստրիական զարգացման գործակալության կողմից համաֆինանսավորվող Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն (EU-GAIA) նախագծի միջև ստորագրված հուշագրի շրջանակում, մասնավորապես, արդյունավետ համատեղ գործողություններ են նախատեսված՝ ագրոնոմիական ու ագրարային ճարտարագիտության ֆակուլտետների մի շարք ամբիոնների գործուն մասնակցությամբ: Դրանք ներառելու են գործունեության լայն շրջանակ՝ նորագույն տեխնոլոգիաների (այդ թվում՝ անօդաչու թռչող գյուղատնտեսական սարքի) ներդրումից մինչև փորձացուցադրական դաշտեր Ակունքի տնտեսությունում և Ճզգրիտ գյուղատնտեսության մագիստրոսական ծրագրի ներդրում ՀԱԱՀ-ում:

7. Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների (FAST) հիմնադրամի, ԿԳՄՍ նախարարության և ՀԱԱՀ համագործակցության շրջանակում նախատեսվում է համալսարանում հիմնել կենսատեխնոլոգիաների Բիոթեք ինկուբատոր:

8. 2020թ. նոյեմբերին՝ մեկնարկել է ՀԱԱՀ-ի և Կանաչ արահետ ՀԿ-ի միջև համագործակցությունը՝ ԵՄ-ի «EU4Youth–Սոցիալական ձեռներեցության էկոհամակարգի զարգացում՝ սահմանային գյուղերում կանաչ առաջընթացի համար» ծրագրի շրջանակում: Համագործակցության արդյունքում ՀՀ Լոռու մարզում կստեղծվի Գյուղական նորարարական գիտելիքի հանգույց (ՀԱԲ), որը

կտեղակայվի ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղում: Հարը նպատակ ունի կարողությունների զարգացման միջոցով աջակցել երիտասարդների զբաղվածությանը և ստեղծել նպաստավոր էկոհամակարգեր սոցիալական ձեռներեցության և կանաչ նորարարության համար: Ծրագրիտևողությունը՝ երեք տարի: